

Ղազարոս Աղայան

Քյորօղլու թուրը

(Ավանդություն)

Քյորօղլին, դեռևս տասնչորս տարեկան մի պատանի՝ հորթարած է լինում: Մի անգամ մի փախուստ տվող հորթի հետևից քար է գցում, որ ետ դարձնե, քարը դիպչում է հորթին և գնդակի պես միջովն անցնում: Հորթը սատկում է, իսկ նրա տերը պահանջում է իր ապրանքի գինը: Քյորօղլու հայրը, որ թեպետ կուրացած, բայց շատ փորձառու մարդ է լինում, ասում է որդուն.

Որդի՛, վնաս չունի, մենք կվճարենք հորթի գինը, եթե ինձ կհասցնես այն հորթասպան քարը: Այն քարը մի հորթից շատ ավելի կարժե:

Որդին բերում է քարը և տալիս հորը:

Հայրը շոշափում է քարը և, ծանր ու թեթև անելով՝ նկատում է, որ քարը իր ծավալի համեմատությամբ շատ ծանր է:

Մի՞թե այս քարը չի պսպղում, հարցնում է որդուն:

Այո՛, հայր, պատասխանում է որդին:

«Սա կայծակ է», ասում է ծերունին իր մտքումը, բայց որդուց գաղտնի է պահում այդ: (Այն ժամանակները մթնոլորտից վայր ընկած մետաղախառն քարերը համարվում էին երկնքից վայր ընկած կայծակ):

Յատուկ Դրէմ

Ծերունին վերցնում է այդ քարը և գնում է մի ուրիշ գյուղ, որտեղ թուր շինող լավ վարպետներ են լինում, որ նորագյուտ մետաղից մի թուր շինել տա: Թուրը շինել տալուց առաջ, նույն կտորից մի բիզ է շինել տալիս և պահում մոտը:

Վարպետները շատ դժվարությամբ են կարողանում թուրը շինել, և երբ որ վերջացնում են՝ սկսում են փորձել նրա հատկությունը: Խփում են գերանի, քարի, երկաթի, բոլորն էլ կտրատում է պանրի պես:

Այս որ տեսնում են վարպետները՝ մտածում են, որ թուրը սեփականեն և նրա տեղ մի հասարակ թուր տան: Կույր Ծերունին որ գալիս է թուրն ստանալու՝ նրան մի ուրիշ թուր են տալիս: Ծերունին սկսում է շոշափել, փորձում է ճկունությունը, տեսնում է, որ պետք եղածի չափ չի ճկվում, գրպանից հանում է բիզը, որն այնպես է ծակում թուրը և անցնում մյուս կողմը, ինչպես ասեղը շորի միջով:

Այս իմ թուրը չէ, ասում է, տվե՛ք իմ թուրը:

Վարպետները տեսնում են, որ կույրը վաղօրոք իր զգուշությունը բանեցրել է՝ թրի կտորից բիզ շինել տալով, տալիս են իսկական թուրը: Ծերունին փորձում է բզովը, գտնում է անմատչելի. փորձում է ճկունությունը, գտնում է այնքան ճկուն, որ կարող է կլորել և դնել ծոցումը:

Այս է ահա իմ թուրը, ասում է և շինելու վարձը վճարում:

Երբ որ թուրը իր ձեռքով դնում է պատյանի մեջ՝ նա այնպես է ամրանում, որ էլ հանել չէր կարող, եթե ուզենար, բայց այդ չի իմանում ինքը: Այդ խորամանկությունը բանեցրել էին վարպետները, որ ճանապարհին ձեռքիցը խլեն՝ իբրև անծանոթ ավազակներ:

Ծերունին ճանապարհ է ընկնում: Ճամփի կիսումը վարպետները հասնում են հետևիցը և ուզում են թուրը խլել: Ծերունին ուզում է պաշտպանվել, ուզում է թուրը պատյանից հանել, դուրս չի գալիս:

Է՛հ, վնաս չունի, թող դուրս չգա, ասում է ծերունին, եթե սա իմ թուրն է՝ պատյանով էլ կկտրի:

Այս ասելով՝ վրա է բերում թուրը պատյանով, և երկուսի էլ գլուխը թոցնում է:

Այդ ժամանակները դեռ վառոդը չէր գտնված. քաջերի սահմանը իրանց թուրն էր: Երբ որ ծերունու որդին՝ Ռուշանը, հասունացավ և հայտնի դարձավ Քյորօղլի (կույրի որդի) անունով, և հոր պատրաստած թրին տիրացավ՝ նա ոչ միայն շատ լավ հասկացավ նրա հարգը, այլ այնպես սիրահարվեց վրան, որ վերջը մի երգով գովաբանեց նրան, ինչպես և իր Ղռաթին:

Ահա՛ այդ երգը.

Իմ աչքիս լույս, իմ հոգիս, թո՛ւր,
Դու իմ անգին ալմազ մաքուր, թո՛ւր.

Չկա՛ ոչինչ աշխարհքումս,
Որ քեզ համար լինի ամուր, թուր…
Թո՛ւր, թո՛ւր, թո՛ւր,
Իմ սիրական թո՛ւր:

Քո մեջն է իմ ուժն ու հոգին,
Դո՛ւ ես շունչ տալիս իմ կյանքին, թո՛ւր.
Աղյուծը դառնում է աղվես,
Երբ շողում ես դու իմ ձեռքին, թո՛ւր:
Թո՛ւր, թո՛ւր, թո՛ւր,
Իմ գովական թո՛ւր:

Դո՛ւ ես իմ տերն, իմ պահողը,
Իմ մուրազին հասցնողը, թո՛ւր,
Աննման Նիգյար խանումիս
Դո՛ւ եղար ինձ մոտ բերողը, թո՛ւր:
Թո՛ւր, թո՛ւր, թո՛ւր,
Իմ պատվական թո՛ւր…

Քեզ եմ պաշտում, քեզ եմ սիրում,
Գոհարներով քեզ զարդարում, թո՛ւր.

Սրտիս բոլոր խորհուրդները
Քեզ եմ միայն հանձնարարում, թո՛ւր:
Թո՛ւր, թո՛ւր, թո՛ւր,
Իմ աննման թո՛ւր…

Խեղճ Քյորօղլիս ի՞նչ կանեի,
Եթե քեզանից զրկվեի, թո՛ւր.
Սազը ձեռիս արտասվելով՝
Քե՛զ միայն, քե՛զ կըփնտրեի, թո՛ւր:
Թո՛ւր, թո՛ւր, թո՛ւր,
Իմ գովական թո՛ւր: